ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 28 >> օգոստոսի 2015թ. N 69

ք. Արմավիր

ԾԱՂԿԱՆՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 159-րդ, 161-րդ, 164-րդ և 169-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման N 1 հավելվածի 16-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի հունվարի 26-ի N09-Ա հրամանով հաստատված հավելվածը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ծաղկանուշ Գրիգորյանին տրամադրել 2015 թվականի իր ամենամյա արձակուրդը՝ 2015 թվականի սեպտեմբերի 7-ից հոկտեմբերի 9-ը ներառյալ՝ 24 աշխատանքային /20 նվազագույն, 4 լրացուցիչ/ և 1 տոնական օր տևողությամբ:
2. Ծաղկանուշ Գրիգորյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ Վարդան Ալեքսանյանին:
3. Ծաղկանուշ Գրիգորյանին աշխատանքի մեջ համարել 2015 թվականի հոկտեմբերի 12-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՄՈՒՐԱԴՅԱՆ